«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Առարկան՝ Աշխարագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Զուլիետա Բաղդասարյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Լոռու մարզ, Քարկոփի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն----------3 էջ

Մաս 1. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բնույթը և վերլուծությունը ----------5 էջ

Մաս 2. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների տեսակները՝ «բաց» և «փակ» կոնֆլիկտներ, առաջացման պատճառները ----------9 էջ

Եզրակացություն----------15 էջ

Օգտագործված գրականության ցանկ.....17 էջ

Ներածություն

Հետազոտության արդիականությունը։ Ընտանիքը որպես սոցիալական յուրատիպ կառույց իր զարգացման առանձնահատկություններով և պատմական կերպով մշտապես գտնվել և գտնվում է հոգեբանների, մանկավարժների, պատմաբանների և ոլորտի այլ պատասխանատուների ուշադրության կենտրոնում։ Ընտանիքի գիտական և մասնավորապես հոգեբանական դիտապատկերի վերահսկումն ազգային, հասարակական և պետական նշանակության անենաարդիական հարցերից է։ Յուրատիպ վերլուծության և բազմագործոն դիտարկման է ենթարկվել և մինչև օրս ենթարկվում է ամուսնաընտանեկան կոնֆլիկտների և վերջիններիս հաղթահարման մեխանիզմների վերաբերյալ հետազոտությունները, որոնց վերաբերյալ քննարկումները մշտապես գտնվում են հատկապես հոգեբանների ուշադրության կենտրոնում։ Այս առումով մեր հետազոտությունն առանձնակի արդիական է համարվում երկու հիմնական հանգամանքներով պայմանավորված.

ա) Ամուսնաընտանեկան կոնֆլիկտները ունեն արտահայտված սոցիալական և հոգեբանական բնույթ և, այս իմաստով առանձնակի ենք արժևորում ամուսնաընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառների և հաղթահարման հնարավոր մեխանիզմների ուսումնասիրման առավել համընդգրկուն ուսումնասիրությունները։ Առավել քան արդիական է հատկապես մերօրյա հասարակարգի սոցիալական, քաղաքական և հոգեբանական զարգացումների համատեքստում քննարկվող հարաբերությունների ուսումնասիրումը, քանի որ ընտանիքի կառույցն այստեղ ևս կրում է փոփոխություններ և ունի նոր մոտեցումների անհրաժեշտություն։

բ) Ամուսնաընտանեկան փոխհարաբերություններում առկա կոնֆլիկտների հետազոտումը և հաղթահարման մեխանիզմների առաջացումը հնարավորություն

է ընձեռում առաջադրել այն ճանապարհներն ու լուծման հնարավոր մեխանիզմները, որոնք կնպաստեն հարաբերությունների պահպանմանը և հետագա դինամիկ զարգացմանը: Մեր հետազոտության համար առանցքային է համարվում այն վարքային-ստրատեգիական մոդելների վերլուծությունը և մշակումը, որը հնարավորություն է ընձեռում առավել արդիական լուծումներ գտնել հարաբերությունների հետագա դինամիկ զարգացման համար:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ վերլուծել ամուսնաընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և հաղթահարման յուրատիպ մեխանիզմները:

Հետազոտության օբյեկտն է՝ - կոնֆլիկտային համարվող ընտանիքների միջանձնային կոնֆլիկտային փոխհարաբերությունները, հաղթահարման վարքային մոդելները և մեխանիզմները:

Հետազոտության առարկան է՝ ամուսնաընտանեկան փոխհարաբերություններում առաջացող կոնֆլիկտները:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ տեսական-մասնագիտական գրականության շրջանակներում ուսումնասիրվում են ընտանիքի կերպը և ամուսնաընտանեկան փոխհարաբերություններում առաջացող կոնֆլիկտները, այն ուղիները, որոնք նպաստում են կոնֆլիկտների հաղթահարմանը: Այս հիմնախնդիրը արծարծվել է այնպիսի հեղինակների աշխատություններում, ինչպիսիք են՝ Վ.Ա.Սիսենկոն, Յու.Ալյոշինան, Վ.Պ.Մենինուտինը, Զ.Ցելինիբը, Օ.Ն.Գրոմովան, Դ.Ենիկեևան, Ս.Կռատոխվիլը, Ի.Դ.Մարինովսկայան, Ն.Ն.Օբոզովը, Ա.Ն.Օբոզովան, Վ.Պոնոմարենկոն, Ա.Ռոզենֆիլդը,Ա.Գ.Խառչևը,Մ.Չեկադինը, Վ.Մ.Ցելյուկոն և այլոք: Հայ հեղինակներից այս հիմնախնդրին անդրադարձել են՝ Զ.Ստեփանյանը, Ս.Սեդրակյանը, Ա.Նալչաղյանը, Ս.Հարությունյանը, և այլոք:

Մաս 1. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բնույթը և վերլուծությունը

Յուրաքանչյուր հասարակության մեջ մարդիկ ապրում են խմբերով, որոնք փոխադարձաբար լրացնում են միմյանց: Երկու կամ ավելի մարդկանց հանրույթը, որի անդամները միավորվել են որոշակի ընդհանուր նպատակների հասնելու, շփվելու կամ համատեղ գործունեություն կատարելու համար ընդունված է ան-վանել սոցիալական խումբ: Սոցիալական խմբում անդամներից յուրաքանչյուրի հոգեկանում և միմյանց միջև ծագում են այնպիսի հոգեվիճակներ և հոգեկան երևույթներ, որոնք չէին կարող գոյություն ունենալ, եթե մարդը միայնակ լիներ: Սրանով է պայմանավորված ընտանիքների ուսումնասիրության կարևորությունը մարդկանց հոգեկան կյանքը ընկալելու, ճիշտ հասկանալու, համապատասխան վարքագիծ մշակելու և համակեցության միջավայր ձևավորելու համար [1,էջ19]: Հոգեբնները ընտանիքը դիտում էին առաջին հերթին որպես սոցիալական փոքր խումբ: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններն այն են, որ ընտանիքի անդամները միմյանց հետ կապված են ամուսնական կապերով, նրանք անմիջական կրկնվող, երկարատև և կայուն հարաբերությունների մեջ են միմյանց հետ, ապրում են մի հարկի տակ, ինչպես նաև ընտանիքը անհատական կենցաղի կազմակերպման լավագույն ձևն է [1,էջ 17]: Պատմականորեն ձևավորված խմբերի պատմության մեջ, թերևս, ընտանիքը ամենակայունն է պահպանված թե իր տեսակներով, թե իր գործառույթներով և կառուցվածքով: Շատ հետազոտողների կարծիքով ամուսնաընտանեկան փոխհարաբերությունները գտնվում են քայքայման, անգամ վերացման եզրին: Բայց միևնույն ժամանակ կարելի է ասել, որ ամուսնաընտանեկան հարաբերությունները հասարակության զարգացման հետ զուգընթաց նորովի զարթոնք են ապրում իրենց խնդիրներով և տեսակային առանձնահատկություններով: «Ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունների

միջև գոյություն ունեն սեռմ փոխկապվածություն։ Գիտնականները հստակ պնդում են, որ ընտանիքը և ամուսնությունը առաջացել են տարբեր պատմական ժամանակահատվածում։ Ա.Գ.Խարչևը պնդում էր, որ ընտանիքը դա «պատմական փոփոխվող սոցիալական ձևերի հարաբերությունն է տղամարդու և կնոջ միջև, որին համապատասխան հասարակությունը կարգավորում է և արգելանքներ է դնում նրանց լրիվ կյանքի ընթացքում և հիմնավորում է ամուսնաընտանեկան, ծնողական իրավունքների, պարտականությունների հարցերը» [8,էջ19]։

Ամուսնաընտանեկան փոխհարաբերությունների հոգեկան առողջությունը հանդիսանում է հաջողության գլխավոր ցուցանիշը։ Ամուսնաընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անընդհատ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ։ Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով։

Ամուսնաընտանեական հարաբերությունների բուն ոգին, դա առկա հարաբերությունների բնույթն է, ամուսնության ընդհանուր տեսակն ու երանգը։ Սա կարելի է անվանել ընտանեկան մթնոլորտ։ Ըստ էության դա ուրախության կամ փորձությունների, ամուսնության մեջ լիարժեքության կամ թերարժեքության զգացման հիմնական աղբյուրն է։ Ամուսնաընտանեկան մթնոլորտը բաղկացած է բազմաթիվ տարրերից, որոնցից հիմնականը ընտանիքի բարոյական առողջությունն է, որը սերտորեն կապված է հասարակության կյանքի հետ։ Կարելի է ասել, որ բարոյական ընտանեկան մթնոլորտը այնքանով է կայուն, որքանով որ սոցիալական ընտանիքը, իսկ ամուսիններն անկեղծ ու ազնիվ են իրենց հարաբերությունների մեջ։ Ավելին, ընտանիքի և ամուսինների բարոյական գիտակցությունը անընդհատ աճում է, եթե այստեղ նրանք ոչ թե հռչակում են սկզբունքներ, այլ առաջնորդվում են դրանցով, չեն խոսում այն մասին, թե ինչպես վարվել, այլ պարզապես ապրում են խղճի և պատվի օրենքներին համապատասխան, ոչ թե խոսում են բարոյականության մասին , այլ ապրում են դրա օրենքներին համաձայն, նման մթնոլորտը լավատեսական է՝ լցված

բարձր բարոյականությամբ, ապագայի հանդեպ վստահությամբ։ Ամուսնաընտանեկան մթնոլորտը ընտանիքի հոգեբանական կլիման է։ Հոգևոր մոտեցումը ստեղծվում է ամուսինների, ծնողների և երեխաների հոգեբանական համատեղելիության հիման վրա՝ միջանձնային հարաբերությունների համակարգում, ինչը կարգավորիչ նշանակություն ունի ամուսնական հարաբերությունների աճի և երանգի համար [7,էջ22]։

Ընտանիքն է, որ ստեղծում է բարձրագույն արժեք, գուցե ամենագեղեցիկը՝ ուրախություն։ Ամենից հաճախ ընտանեկան կոնֆլիկտները ծագում են լարված ու կոնֆլիկտային մթնոլորտ ունեցող ընտանիքներում։ Լարված և կոնֆլիկտային մթնոլորտը բնորոշ է իրարամերժ տիպի ընտանիքներում, որում ամուսիններն ունեն նույն կամ հակառակ թերությունները, ամուսինն ու կինը երկուսն էլ ծառայող են, աշխատասեր, մաքրասեր կամ ծույլ, անփույթ։ Բայց մարդու կյանքի ոչ մի բնագավառ զերծ չէ կոնֆլիկտներից, բացառություն չի կազմում նաև ամուսնաընտանեկան հարաբերությունները։ Քանի որ ամուսնաընտանեկան փոխհարաբերությունների մեջ անդամները լինում են երկարատև ժամանակահատվածում, ապա նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի։ Ամուսինների միջև կարող են առաջանալ հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ։

Կոնֆլիկտը (լատիներեն՝ confliktus – ընդհարում բառից է) նշանակում է, կողմերի, հակադիր հայացքների բախում։ Կոնֆլիկտներն ընդգրկում են մարդկանց կյանքի բոլոր ոլորտները, սոցիալական հարաբերությունների և սոցիալական փոխազդեցության ամբողջ խումբը [6,էջ 16]։ Կոնֆլիկտային փոխգործակցությունը ենթադրում է առճակատում կողմերի միջև, այսինքն՝ միմյանց դեմ ուղղված գործողություններ։ Կողմերի միջև բացահայտ առճակատման սկիզբը կոնֆլիկտային վարքի արդյունքն է։ Մինչև օրս կոնֆլիկտոլոգիայի ոլորտում չկա կոնֆլիկտների մասին՝ գիտնականների մեծամասնության կողմից

ընդունված ընդհանուր տեսություն: Գիտության յուրաքանչյուր ճյուղ ունի կոնֆլիկտների էության և դասակարգման, դրանց կառուցվածքի, գործառույթների և այլնի վերաբերյալ իր տեսակետը: Ներկայումս ամուսնաընտանեկան կոնֆլիկտների խնդրի վերաբերյալ հրապարակումների քանակը զգալիորեն աճել է, մեծանում է նաև տարաբնույթ մասնագետների, ներկայացուցիչների շրջանում կոնֆլիկտների լուծման նկատմամբ հետաքրքրությունը: Ամուսնաընտանեկան կոնֆլիկտները ժամանակակից ժողովրդավարական հատկությունների հիմնական սոցիալական խնդիրներից մեկն է:Ամուսինների միջև ծագող կոնֆլիկտները սոցիալ-հոգեբանական գործընթացներ են, որոնք ունեն իրենց սկիզբը, ընթացքն ու ավարտը [4,էջ 58-59]: Ամուսնական կոնֆլիկտները դա այն հասկացությունն է, որն ընդգրկում է ընտանիքի անդամների միջև տարաձայնությունները, որի ի հայտ գալու հիմքում ընկած է հակառակորդ կողմերի պայքարի մեթոդներն ու նպատակները, որոնք համատեղվում են կոնկրետ իրավիճակում: Երբ ամուսնաընտանեկան կոնֆլիկտների շնորհիվ ընտանիքի հիմքերը սկսում են խարխլվել, ապա ընտանիքը որպես սոցիալ-հոգեբանական խումբ, կորցնում է հոգեբանական ճգնաժամերին դիմակայելու ունակությունը: Ն. Սմելզերը գտնում է, որ ընտանեկան կոնֆլիկտների պատճառ կարող են լինել ամուսինների անձնային հոգեբանական տարբերությունները, նրանց բնավորության այնպիսի գծեր, որոնք մյուսի կողմից գնահատվում է որպես տհաճ (հարբեցողությունը, ծխելը, թմրամոլությունը, խաղամոլությունը և այլն) [8, էջ 688]: Կոնֆլիկտների առաջացումը կապված է մարդկանց՝ որոշակի կարիքներ բավարարելու կամ դրանց բավարարման համար պայմաններ ստեղծելու ցանկության հետ՝ հաշվի չառնելով մյուս ամուսնու կամ ընտանիքի մեկ այլ ադամի շահերը:

Մաս 2. Ամուսնաընտանեկան կոնֆլիկտների տեսակները՝ «բաց» և «փակ» կոնֆլիկտներ, առաջացման պատճառները

Ընտանեկան կոնֆլիկտները բազմազան են: Սրանք կոնֆլիկտներ են ամուսինների, ծնողների, երեխաների միջև, ինչպես նաև տարաձայնություններ երիտասարդ և ավագ սերունդների ներկայացուցիչների միջև: Կոնֆլիկտն առաջանում է ամուսինների համար ինչ-որ բարդ խնդրի պատճառով:Կոնֆլիկտի ամենանշանակալի դերը ընտանիքի ձևավորման ընթացքում է, երբ ամուսինները նոր են սկսում հարմարվել միմյանց: Այս փուլում է, որ կարևոր է որոշել կոնֆլիկտային իրավիճակների լուծման ուղիները և միջոցները: Կոնֆլիկտիկողմերից յուրաքանչյուրը յուրովի է պատկերացնեում տարաձայնությունների գոտում ստեղծված իրավիճակը և դրան նպաստող հանգամանքները: Կողմերից յուրաքանչյուրը յուրովի է գնահատում կոնֆլիկտի բնույթը, որն էլ կոնֆլիկտի առաջացման պատճառ է դառնում: Կոնֆլիկտների հոգեբանական հետազոտությունները նպատակ ունեն պարզաբանելու այն հոգեբանական օրինաչափությունները, որոնք ընկած են կոնֆլիկտների առաջացման և զարգացման հիմքում: Առավել չափով կարևորվում են այնպիսի բովանդակություններ, ինչպիսիք են՝ շարժառիթները, դրդապատճառները, հետաքրքրությունները, նպատակները, հուզական հակազդեցությունները, իմացական կոնստրուկտները և այլն: Կոնֆլիկտի գործառույթները կապված են հակասության վրա ազդեցության, կոնֆլիկտի առաջացման պատճառներ, տրամադրությունների, փոխհարաբերությունների, հակառակորդների անհատական գործունեության արդյունավետության, խմբի համատեղ գործունեության արդյունավետության և դրա շրջանակներում փոխհարաբերությունների, արտաքին միկրո և մակրոմիջավայրերի հետ [5,էջ12]: Հոգեբան Ա.Վ. Դմիտրիևը կոնֆլիկտը ներկայացնում է որպես զարգացող գործընթաց, որը բաղկացած է չորս փուլից՝

1.Առաջին փուլը կոնֆլիկտի սկիզբն է։ Ստեղծվում է միջադեպ, առաջանում է կոնֆլիկտային իրավիճակ։ Հարաբերությունների լարվածությունը տեղի է ունենում ինչպես օբյեկտիվ պատճառներով, այնպես էլ չափից շատ հույզերից, անհարգալից վերաբերմունքից, մտքերի ոչ ճիշտ արտահայտելուց, սխալ եզրակացություններից։ Հակամարտությունների հանգեցնող բառերը, գործողությունները, ինչպես նաև անգործությունը, որոնք հանգեցնում են կոնֆլիկտի, կոչվում են կոնֆլիկտագեններ։

2.Երկրորդ փուլը կոնֆլիկտի վերելքն է։ Հարաբերությունները սրվում են, և հակասությունների կուտակումից միջադեպը վերածվում է կոնֆլիկտի։

3.Երրորդ փուլը կոնֆլիկտի գագաթնակետն է։ Դիտվում է կոնֆլիկտի էսկալացիա սրումը, կողմերի ընդդիմության ակտիվացում, հարաբերությունների ճգնաժամ։ Բախումը հասնում է այնքան հեռու, որ գործի շահերը հետևի պլան են մղվում, անձնական նախասիրությունը առաջին տեղում են, մասնակիցների բոլոր մտքերը ուղղված են պայքարին, որը վեր է ածվում ինքնանպատակի.զգացմունքներն են կառավարում մարդկանց, այլ ոչ թե բանականությունը։ Այս փուլը, իր հերթին, բաղկացած է երկու մասից։ Առաջինը կառուցվածքային (երբ հնարավոր է գտնել ընդհանուր լեզու և շարունակել համատեղ գործունեությունը) և, երկրորդը՝ ապակառուցողական(երբ շփումը առճակատման ձև է ընդունում, և համագործակցությունը դառնում է անհնար)։

4.Չորրորդ փուլը կոնֆլիկտի անկումն է։ Կոնֆլիկտը մարում է. հարաբերությունները կամ հարթվում են, կամ տեղի է ունենում դրանց վերջնական խզում։ Կոնֆլիկտի ռացիոնալ ավարտման համար կարևոր է վերացնել նրա իրական պատճառը և թույլ չտալ, որպեսզի կոնֆլիկտը ձգձգվի։ Հակառակ դեպքում դա ավելի է սրվում, և հետևանքները բերում են ոչ միայն բարոյական վնասի հոգեբանական անհարմարության՝ ապատիայի, վատ տրամադրության և ինքնազգացողության տեսքով, այլև նյութական վնասի, քանի որ նվազում է աշխատունակությունը [14,էջ 320]։

Կոնֆլիկտները իրենց տեսակներով բարդ են և բազմազան։ Առանձնացվում է կոնֆլիկտների հետևյալ տեսակները՝

1. Ֆիզիոլոգիական կոնֆլիկտ։ Զուգընկերները բոլորովին տարբեր են և այս ֆոնի վրա անպայման առաջանում է կոնֆլիկտային իրավիճակ։ Այս տեսակի կոնֆլիկտները պետք է վերացնել դեռ սաղմնային վիճակում, ընտանեկան կյանքի հենց սկզբում, հասկանալ միմյանց առանձնահատկությունները և ուղիղ կերպով խոսել դրանց մասին։ Դա ճիշտ այն դեպքն է, երբ կարելի է անել միակ եղանակով՝ սեփական կենսագործունեությունը կազմակերպել այնպես, որ դրանում ամուսիններից ոչ ոք իրեն ընկճված չզգա և ստիպված չլինի հարմարվել մյուսի ցանկություններին և կարիքներին։ Բայց եթե թյուրըմբռնումից խուսափելն անհնար է, պետք է գիտակցել, որ այս տիպի կոնֆլիկտը չի կարող ընտանիքի փլուզման հիմք հանդիանալ, և դրանից դուրս գալու լավագույն ելքը փոխզիջումն է։

2. Հոգեսեռական կոնֆլիկտը զուգընկերների կյանքում հասունանում է այն ժամանակ, երբ նրանց կյանքից վերանում է էյֆորիան, ինչը զույգին տալիս է սիրահարվածության զգացում։ Եվ զուգընկերոջից աճող դժգոհության զգացումը լավ հիմք է այս տեսակի բախումները կանխելու համար։ Այս տիպի կոնֆլիկտները կանխելու միջոցն է լինել այնպիսին, ինչպիսին որ կար ամնասկզբից զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունները։

3. Կարգավիճակադերային։ Հենց սրա առաջացման հետ է կապված ամուսնական զույգերի շրջանում տպավորիչ թվով ամուսնալուծությունների քանակը։ Եթե զույգում կողակիցներից մեկը ցուցադրաբար չի հարգում մյուսին և ամեն կերպ նսեմացնում է նրա դերը, կարգավիճակադերային կոնֆլիկտն ակնհայտ է։ Այն հայտնվում է մեզալյանսներում (առավել հայտնի որպես անհավասար ամուսնություն), իսկ զուգընկերների անհավասարությունը սոցիալակա բնույթ է կրում։

4. Հուզական կոնֆլիկտի մեջ հիմնական խնդիրը ամուսիններից մեկի կողմից սիրո ակնհայտ դրսևորումների բացակայությունն է։ Նման դրվածքը սովորաբար

հաստատվում է զույգերի մեջ, երբ զուգընկերներից մեկը փակ և ոչ շատ հուզական անձնավորություն է, ուստի նա չի կարող յուրաքանչյուր հինգ րոպեն մեկ կրկնել իր ոչ երկնային սիրո մասին: Եվ եթե այդ կեսն այնքան էլ վստահ չէ սեփական անձի և ամուսնու զգացմունքների վրա, ապա հուզական կոնֆլիկտը երկար սպասել չի տա: Ջերմ վերաբերմունք սիրելիի նկատմամբ չցուցաբերելու դեպքում վաղ թե ուշ կասկածի տակ է դնում զուգընկերոջ կողմից որևէ զգացմունքների առկայությունը:

5. Տարիքային: Հոգեբաններն անվանում են ոչ թե սերունդների միջև հավերժ վիճաբանությունները, այլ թյուրըմբռնումը, որն առաջանում է այն մարդկանց միջև, որոնց հասունությունը բոլորովին տարբեր մակարդակներում է: Այս տեսակի կոնֆլիկտները չ ափազանց հեշտ են սրվում. բավարար է պարզապես չնկատել զուգընկերոջը և ցույց տալ, որ միջոցառումներին համատեղ մասնակցությունն անհնար է: Նմանօրինակ հարաբերություններ արժե պահպանել միայն այն դեպքում , եթե ամուսիններից յուրաքանչյուրը վստահ է, որ իր կողքին այն «միակն ու անկրկնելին » է: Հատկանշական է, որ հոգեբաններն ասում են, որ տարիքային կոնֆլիկտները շատ դժվար է լուծել:

6. Արժեհամակարգային կոնֆլիկտ: Եթե երկու մարդու կյանքի առաջնահերթությունները չափազանց տարբեր են և նրանք չեն գտնում շփման եզրեր, ապա այն փաստը, որ նրանք ամուսնական կապի մեջ են, այլ կերպ, քան պատահականություն չի կարելի անվանել: Այնուամենայնիվ, փորձագետները վստահ են, որ կոնֆլիկտի այս տեսակը հնարավոր է հաղթահարել, եթե այն լուծելու համար բավարար ջանքեր գործադրվեն: Նույնիսկ եթե ամուսիններից մեկը ցուցաբերում է հակահասարակական վարք, կախվածություն ունի ալկոհոլից կամ թմրանյութերից, կարելի է փորձել դուրս գալ սովորական սոցիալական շրջանակից և դիմել համապատասխան մասնագետների: Ճիշտ է, արժեհամակարգային հակասության այս տեսակն, այնուամենայնիվ, ծայրահեղություն է: Մնացած բոլոր դեպքերում,խնդիրների հասունացման սկզբնական փուլում, պետք է փորձել

չճնշել զուգնկերոջն իր արժեքային հարթությունում, այդ դեպքում կոնֆլիկտի չհասնելու հնարավորությունը շատ մեծ է։

7. Նյութական կոնֆլիկտ։ Երբ հասարակությունն այդքան լարված է և տարված է նյութական բարիքներով, ընտանիքի նավակը, ֆինանսական վիճակի ցանկացած անհավասարակշռության դեպքում, շրջվել և խորտակվել է։ Եվ այստեղ իրադարձությունների զարգացման երկու տարբերակ կարող է լինել։ Առաջինը ընտանիքում փողի բացարձակ բացակայությունն է, որը հանգեցնում է միմյանց անվերջ նախատինքների՝ գումար վաստակելու կամ ծախսելու անկարողության համար։Եվ երկրորդը՝ ընտանեկան բյուջեի հանկարծակի էական ավելացում, և նման փոփոխությունների հասած ամուսինը որոշում է գտնել իր համար առավել հարմար զուգընկեր։ Իրադարձությունների նման զարգացումից հնարավոր է խուսափել միայն այն դեպքում, երբ կողակիցները երկեուսն էլ նշանակալի դիրք են զբաղեցնում բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են գումար վաստակելուն և ծախսելուն։Եվ եթե հնարավոր է ստեղծել այնպիսի իրավիճակ, երբ ընտանիքի բյուջեն հավասարապես պատկանի երկու ամուսիններին, ապա նյութական կոնֆլիկտն ընտանիքը կազմալուծելու շանսեր չի ունենա [4 ,էջ 44-48]։

Ամուսնաընտանեկան կոնֆլիկտները լինում են՝ բաց և փակ.

Բաց կոնֆլիկտները վիճաբանության, սկանդալի, ծեծկռտուքի և այլ տեսք են ստանում։ Բաց կոնֆլիկտի ժամանակ կողմերի թե վարքը և թե նպատակները ան համատեղելի են։ Ընդհանրապես փակ կոնֆլիկտային փուլից բացին անցնելու հիմնական հայտանիշը կոնֆլիկտային վարքագիծն է։ Դա նշանակում է արտաքուստ դրսևորվող գործողություն, որն ուղղված է հակառակորդի նպատակների իրականացմանը խոչընդոտելուն և սեփական նպատակները իրականացնելուն։

Փակ կոնֆլիկտները արտաքուստ վառ արտահայտվածություն չեն ունենում, դա ներքին դժգոհությունն է, սակայն նմանօրինակ կոնֆլիկտների ազդեցությունը ամուսնական հարաբերությունների վրա պակաս նկատելի չէ, քան բաց կոնֆլիկտներինը։ Փակ կոնֆլիկտների փուլում ի հայտ են գալիս կոնֆլիկտի

կառուցվածքի պատճառների բաղկացուցիչ տարրերը, այսինքն՝ ակնառու է կոնֆլիկտային գործողությունների նախադրյալների հիմքը, իրավիճակի կոնֆլիկտային բնույթի միակողմանի կամ երկուստեք գիտակցումը։ Այս փուլում հարցերին փորձում են բարիադրացական լուծում տալ, բայց եթե այդ փորձերը հաջողությամբ չեն ավարտվում, ապա այն թևակոխում է բաց կոնֆլիկտների փուլ [2,3]։

Այսպիսով, ընտանեկան փոխհարաբերությունների երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում՝ նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների, ճգնաժամերի։ Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության հանուն որոշումներ կայացնելու իրավունքի։ Ամուսինների միջև տեղի ունեցող խոչընդոտները հանդես են գալիս որպես կոնֆլիկտի նախադրյալ։ Ամուսնաընտանեկան կոնֆլիկտները մեզ են ներկայանում, որպես չվերջացող սոցիալական բնույթի հայտնություն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված հետազոտությունների համակազմը, մասնագիտական գրականության ուսումնասիրությունները թույլ տվեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

1.Կոնֆլիկտը երկու կամ ավելի անձանց փոխադարձ բացասական հոգեկան վիճակ է, որը բնութագրվում է թշնամանքով, խորթացմամբ, հարաբերությունների մեջ նեգատիվիզմով՝պայմանավորված անձանց տեսակետների, հետաքրքրությունների կամ կարիքների անհամատեղելիությամբ:

2.Ասում են՝ «տան հիմքը չորս անկյուններն են, իսկ ընտանիքինը՝ երկու գլուխ ները»: Ընտանեկան օջախի չորս անկյունները փոխադարձ սերը, փոխադարձ հավատարմությունը, փոխադարձ հարգանքը և փոխօգնությունն են: Որպես ընտանեկան օջախի ստեղծողներ և պահապաններ, ամուսինն ու կինը հավասարապես պատասխանատու են դրա ճակատագրի, ամուսնության ամրության և երկարակեցության համար, նրանք հավասարապես որոշում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտը և ամուսնական հարաբերությունների ներդաշնակությունը:

3.Ցանկացած ընտանիք հիմնվում է փոխադարձ սպասումների և ակնկալիքների արդարացման կամ հնարավոր արդարացման վրա և, ցանկացած ապաարդարացում կարող է բերել լարվածության, տագնապայնության առաջացման, որի ընթացքում զույգերից յուրաքանչյուրը դրսևորում է յուրովի վարքագիծ, փորձում է յուրովի հարթել ստեղծված իրավիճակը:

4.Ընտանիքներում զույգերը փորձելով պահպանել իրենց ընտանիքը և ենթարկվելով այսպես կոչված բարոյական նորմերին և հասարակական պահանջմունքներին, հիմնականում ընտրում են զիջելու փոխհարաբերային ոճը, որը ոչ միշտ է դրական ընդունվում հենց իրենց կողմից և բավարարում նրանց ինքնագնահատականի պահանջները:

5.Լինում են նաև դեպքեր, երբ զույգերից յուրաքանչյուրը յուրովի է վերլուծում ստեղծված իրավիճակը, փորձում է միայնակ հաղթահարել խոչընդոտները, որը ոչ միշտ է դրական ավարտ ունենում, քանզի փոխադարձ համաձայնության չեն գալիս և մեկը մյուսին չեն զիջում, յուրաքանչյուրը վստահ է իր իրավացիության մեջ։

6.Զուգընկերները պետք է իրար հետ հաղորդակցվեն։ Հաղորդակցման մշակույթն իր հերթին ենթադրում է փոխադարձ վստահություն, քաղաքավարություն, նրբանկատություն, դյուրազգացություն, բարյացակամություն, ուշադրություն, կարեկցանք և բարություն։

7.Ամուսնական կոնֆլիկտների կարգավորման ուղիներից է հոգեբանական խորհրդատվությունը , որն օգնում է մշակել ամուսինների կյանքը բարդացնող և հակասություններ առաջացնող բացասական հոգեբանական գործոնները փոխելու համար առաջարկություններ։ Հոգեբանական խորհրդատվությունը տեղի է ունենում երկու փուլով. կոնֆլիկտի ախտորոշում և ամուսնական հարաբերությունների վերականգնում։ Այնուամենայնիվ, հոգեբանական խորհրդատվությունը բախվում է մի շարք խնդիրների՝ ժամանակի, ընտանեկան կյանքում կոնֆլիկտայնության տարբեր աստիճան ամուսինների մոտ, կոնֆլիկտային վարքի չգիտակցված բաղադրիչների առկայության։

Անհրաժեշտ է համարվում մասնագետի՝ հոգեբանի աշխատանքը։ Պետք է ճիշտ ժամանակին լինի մասնագետի միջամտությունը, որպեսզի խուսափել հետագա բացասական ազդեցությունից զուգընկերների վրա՝ փորձելով ամուսիններին զերծ պահել բացասական հետևանքներից, ընտանիքի տրոհումից՝ ամուսնալուծությունից։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն (մեթոդական վերլուծություն). Երևան: 2010թ.- 465 էջ
2. Ստեփանյան Զ.Ա. Հոգեկան առողջության հայկական հանդես 4 (2): 2013թ. 43- 48 էջ
3. Նալչաղյան Ա.Ա. Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական հարմարում. Երևան: 1968թ.-132 էջ
4. Волкова А. Н., Трепезникова Т. М. Методические приемы диагностики супружеских отношений // Вопросы психологии- Москва, 1985г.-N5-110-116с.
5. Гришина Н. В. Психология конфликта СПБ 2000г.
6. Еникеева Д. Н. Несчастливый брак Москва 1998г.
7. Мариновская И. Д., Цветков В. Л., Гришин А. А. Конфликтология Москва 2001г.
8. Смелзер Н. Соцология - М. Феникс, 1994г-390с.